



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող



Handwritten signature

Արամ Մեյմարյան

«02» 06 2026թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 070 - 26

Նախաձեռնող՝

«ԶԻ ՎԻ ԱՅ» ՍՊԸ
Երևան, Մոլդովական փողոց, 382 /29

Գործունեությունը՝

ԲԱՆԵՑՎԱԾ ՅՈՒՂԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ
Երևան, Էրեբունի վարչական շրջան, Արին Բերդի փող. 5-րդ նրբանցք 13/11

Առդիր՝ 6 թերթ:

Մոտակա բնակելի թաղամասերը՝ Էրեբունի վարչական շրջանի բնակելի շենքերը գտնվում են՝ 0.95 կմ հեռավորության վրա իսկ Խարբերդ բնակավայրից՝ 1.7 կմ հեռավորության վրա:

Համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N 06-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-04.01-2024 արտադրական ձեռնարկությունների սանիտարական նորմերի դասակարգման՝ գործունեությունը դասվում է II դասի ձեռնարկությունների, որի համար սանիտարապաշտպանիչ գոտին ընդունված է 500 մետր:

Որպես հումք նախատեսվում է օգտագործել տարբեր տեսակի նավթային հիմքի վրա արտադրված բանեցված յուղեր և քսայուղեր, այդ թվում.

1. Իրենց սպառողական հատկությունները կորցրած կոմպրեսորային յուղերի մնացորդներ, դասիչ՝ 54100311 02 03 3,
2. Հալոգեններ, պոլիքլորացված դիֆենիլներ և տերֆենիլներ չպարունակող իրենց սպառողական հատկությունները կորցրած տրանսֆորմատորային յուղերի մնացորդներ՝ 54100307 02 033,
3. Իրենց սպառողական հատկությունները կորցրած շարժիչային յուղերի մնացորդներ՝ 54100301 02 03 3,
4. Բանեցված դիզելային յուղեր՝ 54100203 02 03 3,
5. Բանեցված շարժիչների յուղերի թափոններ (Ծածկագիր՝ 54100201 02 03 3):
6. Նշված յուղերը հանդիսանում են վտանգավորության 3-րդ դասի թափոններ:

Սկզբնական փուլում նախատեսվում է վերամշակել տարեկան 250 – 300 տ բանեցված յուղ, հետագայում հասցնելով տարեկան արտադրողականությունը մինչև 600 տ:

Տարածքում որպես շինարարական աշխատանքներ իրականացվելու է միայն ստորգետնյա հակահրդեհային ռեզերվուարի կառուցում՝ 10 խմ ծավալով, որի համար կիրականացվի հողային աշխատանք՝ 41,6 խմ ծավալով, հանված հողը կօգտագործվի տարածքի բարեկարգման աշխատանքների համար: Տարածքում առկա է ևս 30 խմ ծավալով /6*2,3*2,2մ չափերով/ վերգետնյա ռեզերվուար: Ստորգետնյա հակահրդեհային ռեզերվուարի կառուցման համար անհրաժեշտ բետոնը կբերվի պատրաստի վիճակում:

Յուղերի վերամշակման ընտրված տեխնոլոգիան՝ թորման եղանակով, թույլ է տալիս արտադրել արդյունաբերական յուղեր, որոնք նաև անվանվում են՝ դիստիլյացիոն (թորված) նավթային յուղեր:

Արդյունաբերական յուղերը ցածր և միջին մածուցիկության թորած նավթային յուղեր են, որոնք օգտագործվում են որպես քսանյութ, հիմնականում հաստոցների, օդափոխիչների, պոմպերի, տեքստիլ մեքենաների շփման ագրեգատներում, ինչպես նաև որպես հիմք հիդրավլիկ հեղուկների, պլաստիկ նյութերի արտադրության մեջ:

- Արտադրական տարածքում նախատեսվում է տեղադրել հոսքագիծ հետևյալ հիմնական տեխնոլոգիական սարքավորումներով.
- առաջնային թորիչ,
- վակուում թորիչ (դիստիլյատոր),
- կոնդենսատոր,
- խառնիչ,



- դեկանտատոր,
- զտիչներ,
- գազային կաթսա:

Բանեցված յուղերի՝ հումքի ընդունումը նախատեսվում է իրականացնել տակառներով կամ կոնտեյներներով: Իրականացվելու է մեխանիկական զտման գործընթաց, որից հետո յուղերի բեռնումը թորման կաթսայի մեջ նախատեսվում է իրականացնել պոմպի միջոցով, որտեղ ջերմաստիճանը հասցվում է մինչև 120°C: Այս ջերմաստիճանում անջատվում են ջուրը և դյուրաեռ (թեթև) ֆրակցիաները: Դուրս եկող գոլորշիները մտնում են կոնդենսատոր սառեցվում են (կոնդենսացվում) և կրկին վերածվում հեղուկի: Ստացված հեղուկը անցնում է բաժանարարի (սեպարատորի) միջով, որտեղ ջուրը և օրգանական մասը տարանջատվում են: Առաջանում է չոր յուղ, որը ջրազրկված է և մաքրված է թեթև խառնուրդներից: Այն բավականին կայուն է և կարող է անվտանգ կերպով մղվել հաջորդ վակուումային թորման փուլ: Անջատված տեխնոլոգիական ջուրը ուղարկվում է եռաստիճան լոկալ մաքրման կայան (Նավթորսիչ տիպի), որտեղ մաքրվելուց հետո լցվում է քաղաքային կոյուղու ցանց:

Հաշվի առնելով արտադրության տարեկան առավելագույն 600 տոննա հզորությունը՝ օրական առաջանալու է ընդամենը 100-200 լիտր տեխնիկական ջուր:

Վակուումային թորում (Հիմնական պրոցես) հոսքագծում ստեղծվում է ցածր ճնշում (վակուում) / 2-15 մԲար/: Սա թույլ է տալիս յուղը եռացնել ավելի ցածր ջերմաստիճանում (300°C)՝ խուսափելով յուղի քայքայումից (կրեկինգից): Արդյունքում յուղը վակուումային աշտարակում բաժանվում է տարբեր ֆրակցիաների: Թեթև գոլորշիները բարձրանում են վերև, իսկ ծանրները մնում են ներքևում:

Չկոնդենսացվող գազերի մաքրման նպատակով վակուումային պոմպից դուրս եկող գազերը, ուղղվում են հատուկ ֆիլտրման համակարգ /ածխային ֆիլտր/՝ մթնոլորտային արտանետումները բացառելու համար:

Նախատեսվում է օգտագործել խողովակաձև ջերմափոխանակիչներ, որոնց միջով կհոսի սառեցնող ջուրը, իսկ խողովակների արտաքին մակերեսով անցնելու է տաք յուղային գոլորշիները: Համակարգը փակ է, ինչը բացառում է յուղային գոլորշիների և սառեցնող ջրի անմիջական շփումը՝ կանխելով աղտոտումը:

Աշտարակի ներքևի մասում մնում են ծանր մնացորդները՝ բիտումը, հավելանյութերի մնացորդները: Այս նստվածքը երրորդային հումք է և նախատեսվում է վաճառել, որպես հումք ասֆալտբետոնե խառնուրդի ստացման համար:

Մնացորդը կուտակվելու է հակակոռոզիոն ծածկույթ ունեցող մետաղական կամ հատուկ պոլիմերային հերմետիկ տարաներում՝ բացառելով շփումը հողի կամ ջրային ռեսուրսների հետ:

Թորումից հետո ստացված յուղը ունենում է թեթևակի հոտ, դեղնավուն երանգ: Դրանք վերացնելու և ապրանքային տեսքի բերելու համար իրականացվում է կոնտակտային մաքրում՝ հետևյալ միասնական ցիկլով՝

ստացված բազային յուղը խառնվում է ադսորբենտի (ակտիվացված կավի) հետ և տաքացվում է 100-120°C տաքացուցիչ տարայում՝ գույնը բացելու և հոտը վերացնելու համար: Յուղը մտնում է տաքացուցիչի մեջ, հետո ավելացվում է ակտիվացված կավը /յուղի



զանգվածի 5-8 տոկոսի չափով/, միացվում է մեխանիկական խառնիչը և զանգվածը խառնվում է 30-60 ր: Այս ընթացքում կավը կլանում է (ադսորբացնում է) գունանյութերը և օքսիդացման արգասիքները: Խառնման ավարտից հետո ստացված զանգվածը պոմպով մղվում է դեպի ֆիլտր պրես, որտեղ կավը մնում է կտորի վրա, իսկ մաքուր բազալին յուղ՝ պատրաստի արտադրանքը, դուրս է գալիս և լցվում տակառներ:

Բանեցված կավը (յուղով հագեցած) հավաքվում է առանձին հերմետիկ տարաներում և հանձնվում լիցենզավորված ընկերություններին:

Տեխնոլոգիական գծի վերջնամասում, որտեղից չկոնդենսացվող գազերը դուրս են գալիս վակուումային համակարգից և ուղղվում են դեպի կաթսա կամ այրիչ նախատեսվում է տեղադրել հիդրոփական:

Հիդրոփականը կանխում է հետադարձ հարվածը: Եթե այրիչի մոտ տեղի ունենա բռնկում, ջրի շերտը ծառայում է որպես պատնեշ՝ թույլ չտալով կրակին հասնել ռեակտորին: Հիդրոփականը պետք է պատրաստված է լինելու չժանգոտվող պողպատից և ունենալու է դրենաժային ծորակ՝ կոնդենսատը հեռացնելու համար:

Պարճառաքանական մաս. Փորձաքննական գործընթացին մասնակցել են՝ առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, նախարարությունները, կադաստրի և քաղաքաշինության կոմիտեները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմը, Օրգանական քիմիայի ինստիտուտի և շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումները, փորձաքննությամբ ներգրավված փորձագետները:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա կդրսևորվեն որոշակի բացասական ազդեցություններ:

Մթնոլորտային օդի վրա ազդեցություն կլինի թորման ջերմաստիճանը ապահովելու համար օգտագործվող գազային կաթսայում բնական գազի այրման ընթացքում առաջացող ազոտի երկօքսիդի և ածխածնի օքսիդի /վերահաշվարկված երկօքսիդի/ արտանետումների, ինչպես նաև ջերմային պրոցեսների ժամանակ առաջացող ածխաջրածինների արտանետումների արդյունքում:

Արտադրական նպատակներով ջրօգտագործման արդյունքում անմիջապես հովացման համակարգում արտահոսք չի առաջանում, իսկ առաջնային թորման արդյունքում առաջացած կոնդենսատն առանձնացվում է դեկանտատորում, և եռաստիճան մաքրման համակարգում մաքրվելուց հետո, լցվում է քաղաքային կոյուղու ցանց: Խմելու տնտեսական նպատակով ջրօգտագործման արդյունքում առաջացած կեղտաջրերը պատկանում են տնտեսա-կենցաղային կեղտաջրերի կարգին և թափվելու են քաղաքային կոյուղու ցանց:

Ներկայացվող գործունեությունը իրականացվելու է Երևան քաղաքի արդյունաբերական գոտում՝ գործող արտադրական տարածքում, որն արդեն իսկ ազդեցության ենթարկված տարածք է և բացակայում են բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչները:

Հաշվի առնելով արտադրական շենքի մեկուսացումը (-20 դ.Բ) և բնակելի տարածության հեռավորությունը, բնակելի գոտու սահմանում արտադրական աղմուկի մակարդակը կազմում է բացասական կամ զրոյական արժեք՝ չգերազանցելով ֆոնային աղմուկի շեմը:



Արտադրական գործընթացի ընթացքում առաջացող վտանգավոր թափոն հանդիսացող օգտագործված գտիչները (ֆիլտրերը), գույրոնը կհավաքվեն, ժամանակավորապես կպահվեն սահմանված պահանջներին համապատասխան և հետագայում կտեղափոխվեն համապատասխան լիցենզավորված ընկերության արտադրական տարածք՝ հետագա մշակման, վնասագերծման կամ օգտահանման նպատակով:

Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է Օրենքի պահանջներին համապատասխան: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածի՝ 2026 թվականի ապրիլի 7-ին էրեբունի վարչական շրջանի ղեկավարի նստավայրում կայացավ հաշվետվության վերաբերյալ երկրորդ հանրային լսումը:

Հաշվի առնելով «Մթնոլորտային օդի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջները, ինչպես նաև լրամշակված հաշվետվությամբ ներկայացված տեխնոլոգիական հատվածի վերաբերյալ տեղեկատվությունը, փորձաքննությամբ իրականացվել է մասնագիտական քննարկում ընկերության ներկայացուցիչների և փորձաքննական կենտրոնի մասնագետների մասնակցությամբ: Քննարկման ընթացքում անդրադարձ է կատարվել զտման և թորման գործընթացներում կիրառվող համապատասխան ջերմատեխնիկական և կոնդենսացիոն հանգույցներին, նույն ռեակտորում գործընթացների կազմակերպման առանձնահատկություններին, ինչպես նաև տեխնոլոգիական գործընթացի փուլայնության և վերահսկելիության ապահովման հարցերին:

Ընկերության կողմից ներկայացվել է Չինաստանի հանրապետությունում կիրառվող առաջադեմ փորձը, ինչպես նաև չինական ընկերության հետ ժամանակակից տեխնոլոգիական սարքավորումների ձեռքբերման վերաբերյալ պայմանավորվածություններն ու պայմանագրային հիմքերը՝ նպատակ ունենալով ներդնել ժամանակակից և առավել վերահսկելի տեխնոլոգիական լուծումներ:

Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

1. Ապահովել՝ արտադրական կեղտաջրերի նախնական մաքրմանը ներկայացվող պահանջները՝ նախքան կենտրոնացված ջրահեռացման համակարգ դրանց արտանետելը Կառավարության 2025 թվականի նոյեմբերի 14-ի N 1597 -Ն որոշման պահանջներին համապատասխան:
2. Ապահովել «Մթնոլորտային օդի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջները:
3. Ապահովել և տեխնոլոգիական գործընթացի կազմակերպման ընթացքում հետևողականորեն հավատարիմ մնալ փորձաքննության շրջանակներում ներկայացված և քննարկված՝ լավագույն հասանելի տեխնոլոգիական փորձի ներդրմանը և կիրառմանը:
4. Առաջնորդվել «Թափոնների մասին» օրենքի 20-րդ հոդվածի պահանջներով՝ բացառելով արտադրական և հարակից տարածքներում թափոնների անկանոն կուտակումը, երկրորդային աղտոտման առաջացումը և շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները:



ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ԶԻ ՎԻ ԱՅ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Արին Բերդի փողոցի 5-րդ նրբանցք 13/11 հասցեում նախատեսվող բանեցված յուղերի վերամշակման արտադրամասի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված պարտադիր կատարման ենթակա պահանջների ապահովման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Շուշանիկ Կարապետյան